

02/10/2007  
համար 312 Ն

**«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀՈՒՄՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ»  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/03-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 3/03-ը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2008 թվականի հունվարի 1-ը գործում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2006 թվականի նոյեմբերի 7-ի ««Ապահովագրական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 31-ը սահմանելու մասին» թիվ 664Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 7-ի ««Ապահովագրական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 31-ը սահմանելու մասին» թիվ 664Ն որոշումը:

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ**

**S. Սարգսյան**

---

---

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

---

---

*«Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը»  
կանոնակարգ 3/03-ը հաստատելու մասին\**

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է .

1. Հաստատել «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 3/03-ը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2008 թվականի հունվարի 1-ը գործում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2006 թվականի նոյեմբերի 7-ի «Ապահովագրական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 31-ը սահմանելու մասին» թիվ 664-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 7-ի «Ապահովագրական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 31-ը սահմանելու մասին» թիվ 664-Ն որոշումը:

**ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ**  
**5 հոկտեմբերի 2007 թ., N 312-Ն**

---

*\* Ոչ պաշտոնական հրատարակություն:  
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. հոկտեմբերի 2-ին:  
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.12.07 թ. (ՀՀԳՏ N3 (277), 29.01.08):*

Հաստատված է  
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի  
2007 թվականի հոկտեմբերի 2-ի  
թիվ 312-Ն որոշմամբ  
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ  
Տ. ՍԱՐԳՍՅԱՆ  
5 հոկտեմբերի 2007 թ.

Հաստատված է  
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի  
2007 թվականի նոյեմբերի 30-ի  
թիվ 850-Ն հրամանով  
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար  
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ  
2007 թ.

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/03**

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՈՒՍՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ,  
ԴՐԱՆՑ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

**ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1. Սույն կանոնակարգը սահմանում է ապահովագրական ընկերության և վերա-ապահովագրական ընկերության (այսուհետ՝ ապահովագրող) կողմից ձևավորվող տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման հիմնական սկզբունք-ները և հաշվարկման կանոնները:
- 2. Ապահովագրողն ապահովագրության պայմանագրերով կամ վկայագրերով (այսուհետ՝ պայմանագիր) ստանձնած պարտավորությունների (ապահովագրական հատուցումների վճարման) կատարման և հնարավոր ռիսկերի ծածկման նպատակով ձևավորում է տեխնիկական պահուստներ (այսուհետ՝ պահուստ)՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքի և սույն կանոնակարգի:

**ԳԼՈՒԽ II. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 3. Սույն կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացություն-ները՝
  - 3.1) **Ապահովագրավճար**՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարը:
  - 3.2) **Չվաստակած ապահովագրավճար**՝ ապահովագրության պայմանագրով նա-խատեսված ռիսկային բնույթ ունեցող մասի դիմաց նախատեսված ապահովագրա-վճարի այն մասը, որն ապահովագրողը դեռևս չի վաստակել և որը վերաբերում է հաշ-վետու ժամանակաշրջանին հաջորդող ժամանակահատվածին:
  - 3.3) **Վաստակած ապահովագրավճար**՝ հաշվեգրած ապահովագրավճարի և չվաս-տակած ապահովագրավճարների պահուստի (առանց հաշվի առնելու օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն հուսալի համարվող վերաապահովագրողի մասնաբաժինը) մեծության փոփոխության տարբերությունը:
  - 3.4) **Եկամտաբերության նորմա**՝ կյանքի ապահովագրության պայմանագրերով նա-խատեսված ապահովագրավճարների դիմաց եկամտի տոկոսային գործակից:
  - 3.5) **Կարգավորման ծախսեր**՝ ապահովագրության պայմանագրից բխող պահանջն ուսումնասիրելու և վճարումն իրականացնելու հետ կապված ծախսեր, այդ թվում պահանջի հիմքերի քննության, վնասների գնահատման և վճարումը կատարելու ծախ-սեր, իրավաբանական, դատական և պահանջի կատարման հետ կապված այլ ծախսեր:
  - 3.6) **Հաշվետու ժամանակաշրջան**՝ ժամանակաշրջան, որի համար ներկայացվում է հաշվետվություն:
  - 3.7) **Կարգավորված պահանջ**՝ պահանջը համարվում է կարգավորված ապահովա-գրական ընկերության կողմից հայտը բավարարելու և հատուցման չափը որոշելու, հատուցումը մերժելու կամ օրենքի ու այլ իրավական ակտերին համապատասխան՝ պահանջը անհետևանք թողնելու մասին որոշումը ընդունելու, կամ ապահովագրողի կող-մից ապահովագրական հատուցումից գրավոր հրաժարվելու օրվանից:

**ԳԼՈՒԽ III. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՈՒՍՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

- 4. Ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող ապահովագրողը ձևավորում է պահուստի հետևյալ տեսակները՝

- 4.1) չվաստակած ապահովագրավճարների պահուստ (այսուհետ՝ ՉԱՊ),
- 4.2) ապահովագրողին ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների պահուստ (այսուհետ՝ ՆՉՊՊ),
- 4.3) տեղի ունեցած, սակայն ապահովագրողին դեռևս չներկայացված պահանջների պահուստ (այսուհետ՝ ՏՉՊՊ),
- 4.4) հավասարակշռման պահուստ (այսուհետ՝ ՅՊ),
- 4.5) բոնուսների և գեղչերի պահուստ (այսուհետ՝ ԲՉՊ):
- 5. Կյանքի ապահովագրություն իրականացնող ապահովագրողը ձևավորում է պահուստի հետևյալ տեսակները՝
  - 5.1) մաթեմատիկական պահուստ (այսուհետ՝ ՄՊ),
  - 5.2) չվաստակած ապահովագրավճարների պահուստ (ՉԱՊ),
  - 5.3) ապահովագրողին ներկայացված, սակայն չվճարված պահանջների պահուստ (ՆՉՊՊ),
  - 5.4) տեղի ունեցած, սակայն ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստ (ՏՉՊՊ),
  - 5.6) բոնուսների և գեղչերի պահուստ (ԲՉՊ):
- 6. Ապահովագրողն առնվազն յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ (ընթացիկ հաշվարկ) հաշվարկում է սույն կանոնակարգում նշված պահուստները (բացառությամբ՝ ՅՊ-ի, ՏՉՊՊ-ի և «դեպք առ դեպք» մեթոդով հաշվարկվող ՆՉՊՊ-ի) սույն կանոնակարգի 49-րդ կետի համաձայն՝ ապահովագրողի կողմից սահմանված ներքին ակտերին համապատասխան: Ընդ որում, պահուստները հաշվարկվում են նաև հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ (տարեկան հաշվարկ), ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերով սահմանված ապահովագրական պորտֆելի փոխանցման օրվա դրությամբ:
- 7. ՅՊ-ի և ՏՉՊՊ-ի հաշվարկը կատարվում է հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ին՝ հաջորդող տարվա համար (տարեկան հաշվարկ): ՆՉՊՊ-ի «դեպք առ դեպք» մեթոդով հաշվարկը կատարվում է ապահովագրողի, շահառու կամ ապահովագրված անձի կողմից ապահովագրական ընկերությանը պահանջ ներկայացնելու ժամանակ:

**ՉԼՈՒԽ IV. ՊԱՅՈՒՍՏՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

- 8. Պահուստը ձևավորվում և հաշվարկվում է ապահովագրության յուրաքանչյուր դասի համար առանձին:
- 9. Պահուստները հաշվարկվում են յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրի գծով առանձին (բացառությամբ՝ ՅՊ-ի և ՏՉՊՊ-ի): Պահուստի հաշվարկման վիճակագրական մեթոդներ կարող են կիրառվել, եթե դրանք տալիս են գրեթե նույն արդյունքը, ինչ որ անհատական հաշվարկի դեպքում:
- 10. Կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն ներառող խառը պայմանագրերի գծով ապահովագրողը կյանքի ապահովագրության և ոչ կյանքի ապահովագրության մասերի համար ձևավորում է առանձին պահուստներ:
- 11. Կյանքի խառը ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրողը ձևավորում է առանձին պահուստներ կուտակային ապահովագրության մասով (ՄՊ, ԲՉՊ) և ոչ կուտակային ապահովագրության մասով (ՉԱՊ, ՆՉՊՊ, ՏՉՊՊ, ԲՉՊ):
- 12. Ապահովագրողն իր մոտ հինգ տարի ժամկետով, պահպանում է պահուստների հաշվարկներն այնպես, որ հնարավոր լինի դիտարկել դրանց հաշվարկման տարրերն ըստ ապահովագրության առանձին դասերի, և եթե պահուստը հաշվարկվում է յուրաքանչյուր պայմանագրի գծով, ապա նաև ըստ յուրաքանչյուր պայմանագրի:
- 13. Այն պահուստներից, որոնցից թույլատրվում է նվազեցնել օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն հուսալի համարվող վերաապահովագրողի մասնաբաժինը, նվազեցումը կատարվում է վերաապահովագրողի կողմից ռիսկերի ստանձնումը հավաստող փաստաթղթերը (քվերնոթ, սլիփ և այլն) ստանալուց հետո:

**ՉԼՈՒԽ V. ԶՎԱՍՏԱԿԱԾ ԱՊԱՅՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՅՈՒՍՏԻ (ՉԱՊ) ՀԱՇՎԱՐԿ**

- 14. Ապահովագրության տվյալ դասի գծով ՉԱՊ-ը յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրի գծով հաշվարկված չվաստակած ապահովագրավճարների հանրագումարն է՝ նվազեցրած օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն հուսալի վերաապահովագրողի մասնաբաժնով: Ապահովագրողի ընդհանուր ՉԱՊ-ն առանձին ապահովագրության դասերով հաշվարկված ՉԱՊ-երի հանրագումարն է:
- 15. Զվաստակած ապահովագրավճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ZU_i = U_i * ZO_i / \Gamma O_i,$$

*որտեղ՝  
ՉԱ- i-րդ ապահովագրության պայմանագրի չվաստակած ապահովագրավճարի չափն է,  
Ա- i-րդ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի չափն է,  
ՉՕ- i-րդ ապահովագրության պայմանագրի գծով չլրացած օրերի քանակն է հաշվետու  
ժամանակահատվածի ավարտից հետո,  
ՊՕ- i-րդ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետն է՝ օրերով:*

16. i – րդ պայմանագրի գծով օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի համա-  
ձայն հուսալի համարվող վերաապահովագրողի մասնաբաժնի չափը հաշվարկվում է  
հետևյալ կերպ՝

$$V_{2U_i} = V_{U_i} * V_{2O_i} / V_{\Pi O_i}$$

*որտեղ՝  
V<sub>2U<sub>i</sub></sub>- i-րդ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարից հու-  
սալի վերաապահովագրողին փոխանցվելիք ապահովագրավճարի մասով չվաստակած ապա-  
հովագրավճարի չափն է,  
V<sub>U<sub>i</sub></sub>- i-րդ ապահովագրության պայմանագրի վերաապահովագրության գծով օրենքի և այլ  
նորմատիվ իրավական ակտերի համաձայն հուսալի համարվող վերաապահովագրողին փո-  
խանցվելիք ապահովագրավճարի չափն է,  
V<sub>2O<sub>i</sub></sub>- i-րդ ապահովագրության պայմանագրի գծով վերաապահովագրության պայմանագրի  
չլրացած օրերի քանակն է հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո,  
V<sub>ΠO<sub>i</sub></sub>- i-րդ ապահովագրության պայմանագրի գծով վերաապահովագրության պայմանագրի  
գործողության ժամկետն է՝ օրերով:*

17. Այն դեպքում, երբ ապահովագրավճարի չափը փոփոխվող է ապահովագրության  
պայմանագրի գործողության ընթացքում, ապա դա պետք է հաշվի առնվի ՉԱՊ-ի  
հաշվարկման մեթոդի մեջ:

#### **ԳԼՈՒԽ VI. ԱՊԱՅՈՎԱԳՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌԵՎՍ ԶՎՃԱՐՎԱԾ ՊԱՅԱՆՁՆԵՐԻ ՊԱՅՈՒՄՏԻ (ՆՉՊՊ) ՀԱՇՎԱՐԿ**

18. ՆՉՊՊ-ի հաշվարկման սկզբունքներն են՝

18.1) ՆՉՊՊ-ի մեծությունը պետք է հիմնված լինի պահանջները կարգավորելու հա-  
մար ապահովագրողի կողմից վճարվելիք գումարների (հատուցումների) և կարգավոր-  
ման ծախսերի նախնական հաշվարկի վրա (նվազեցրած՝ հուսալի համարվող վերա-  
ապահովագրողին փոխանցվելիք մասը): Ծախսերի նախնական հաշվարկը պետք է  
լինի ողջամիտ և հիմնավոր:

18.2) ՆՉՊՊ-ի հաշվարկում ոչ պայմանական չհատուցվող գումարները մասնակ-  
ցում են այն դեպքում, երբ ապահովագրության պայմանագրով նախատեսված է ապա-  
հովագրողի կողմից պարտավորություն ամբողջ գումարը հատուցելը (ներառյալ՝ ոչ  
պայմանական չհատուցվող գումարը) ապահովագրողին կամ այն անձին, որին կատար-  
վելու է վճարումը, հետագայում ոչ պայմանական չհատուցվող գումարը ետ ստանալու  
պայմանով:

18.3) ՆՉՊՊ-ի չափը պետք է բավարարի մինչև հաշվետու ժամանակաշրջանի  
վերջը ներկայացված, սակայն դեռևս չվճարված բոլոր պահանջների և դրանց կար-  
գավորման ծախսերի վճարման համար:

18.4) ՆՉՊՊ-ի մեծությունը պետք է ներառի նաև հաշվետու ժամանակաշրջանի  
վերջում չկարգավորված, սակայն նախորդ ժամանակաշրջանի վերջում ձևավորված  
ՆՉՊՊ-ն:

19. ՆՉՊՊ-ի հաշվարկը կատարվում է երկու մեթոդով՝

19.1) «դեպք առ դեպք» գնահատում՝ մինչև հաշվետու ժամանակահատվածի  
ավարտը ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների առանձին- առանձին  
գնահատում՝ ներառյալ պահանջների հատուցման կարգավորման ծախսերը,

19.2) «միավոր պահանջի հատուցման միջին չափի» գնահատում, որը կարող է  
օգտագործվել ապահովագրության այն դասերի համար, որտեղ պահանջների՝ հաշվե-  
տու ամսվա և դրան նախորդող տասնմեկ ամիսների միջին ամսական քանակը հիսուն  
և ավելի է, և պահանջների հատուցումների չափերն այդ ամիսների ընթացքում էակա-  
նորեն չեն տատանվել:

20. «Դեպք առ դեպք» գնահատման ժամանակ ՆՉՊՊ-դեպք-ի հաշվարկում պահան-  
ջի գումարը հաշվարկվում է ապահովագրողի նախնական գնահատված մեծությամբ:

21. Միավոր պահանջի հատուցման միջին չափի գնահատման մեթոդով հաշվարկող  
ՆՉՊՊ-ն որոշվում է հետևյալ կերպ՝

$$S_{\text{միջ}} = (P_{\text{չկարգ}} - P_{\text{դեպք}}) * \eta_{\text{միջ}}, \quad \eta_{\text{միջ}} = \frac{\eta_{\text{Չ}}}{\eta_{\text{Ք}}}$$

որտեղ՝  
 $S_{\text{միջ}}$  - ապահովագրության տվյալ դասի գծով ապահովագրողին ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների պահուստն է՝ հաշվարկված միավոր պահանջի հատուցման միջին չափի գնահատման մեթոդով:

$P_{\text{չկարգ}}$  - ապահովագրության տվյալ դասի գծով մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջը ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների քանակն է:

$P_{\text{դեպք}}$  - ապահովագրության տվյալ դասի գծով մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջը ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների քանակն է, որոնք գնահատվել են «դեպք առ դեպք» մեթոդով:

$\eta_{\text{միջ}}$  - ապահովագրության տվյալ դասի գծով պահանջների միջին մեծությունն է հաշվետու ամսվա և դրան նախորդող տասնմեկ ամիսների կտրվածքով:

$\eta_{\text{Չ}}$  - տվյալ ապահովագրության դասի գծով տեղի ունեցած պահանջների (հատուցված, հատուցվելիք և չկարգավորված) չափն է հաշվետու ամսում և դրան նախորդող տասնմեկ ամիսների ընթացքում:

$\eta_{\text{Ք}}$  - ապահովագրության տվյալ դասի գծով տեղի ունեցած պահանջների (հատուցված, հատուցվելիք և չկարգավորված) քանակն է հաշվետու ամսում և դրան նախորդող տասնմեկ ամիսների ընթացքում:

22. Այն դեպքում, երբ ներկայացվել է պահանջ, սակայն դրա չափի մասին ապահովագրողին դեռևս ոչինչ հայտնի չէ, ապա այդ մասով  $S_{\text{միջ}}$ -ն ձևավորվում է ապահովագրական գումարի չափով:

23.  $S_{\text{միջ}}$ -ն նվազեցվում է օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն հուսալի համարվող վերաապահովագրողի մասնաբաժնի չափով:

24. Տվյալ ապահովագրության դասի գծով  $S_{\text{միջ}}$ -ն «դեպք առ դեպք» մեթոդով յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրի գծով հաշվարկված  $S_{\text{միջ}}$ -ի և «միավոր պահանջի հատուցման միջին չափի» մեթոդով գնահատված  $S_{\text{միջ}}$ -ի հանրագումարն է: Ապահովագրողի ընդհանուր  $S_{\text{միջ}}$ -ն ապահովագրության առանձին դասերով հաշվարկված  $S_{\text{միջ}}$ -ների հանրագումարն է:

### ԳԼՈՒԽ VII. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ, ՍԱԿԱՅՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՂԻՆ ԴԵՌԵՎԱ ՉՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՅԱՆՁՆԵՐԻ ՊԱՅՈՒՏԻ ( $S_{\text{միջ}}$ ) ՀԱՇՎԱՐԿ

25.  $S_{\text{միջ}}$ -ի հաշվարկման սկզբունքներն են՝

25.1)  $S_{\text{միջ}}$ -ը ձևավորվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջը տեղի ունեցած, սակայն ապահովագրողին չտեղեկացված պահանջների դիմաց հնարավոր վճարումների բավարարման համար:

25.2)  $S_{\text{միջ}}$ -ի հաշվարկում պետք է ներառվեն պահանջների կարգավորման (ներառյալ՝ գնահատման) ծախսերը:

26. Տվյալ ապահովագրության դասի գծով  $S_{\text{միջ}}$ -ն հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝

$$S_{\text{միջ}} = q_{\text{տ}} * (z_{\text{տ}} + \eta_{\text{տ}})$$

որտեղ՝

$S_{\text{միջ}}$  - տվյալ ապահովագրության դասի գծով տեղի ունեցած, սակայն ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստի մեծությունն է,

$q_{\text{տ}}$  - տվյալ ապահովագրության դասի գծով  $S_{\text{միջ}}$ -ի գործակիցն է:

$z_{\text{տ}}$  - հաշվետու ժամանակաշրջանում կարգավորված (փաստացի վճարված հատուցումների և ապահովագրության պայմանագրերի գծով կրեդիտորական պարտավորությունների) պահանջների և կարգավորման ծախսերի մեծությունն է:

$\eta_{\text{տ}}$  -  $S_{\text{միջ}}$ -ի մեծությունն է  $S_{\text{միջ}}$ -ի հաշվարկման օրվա դրությամբ

տ - հաշվետու տարին է:

27. Երեք և ավելի տարի գործունեություն ծավալած ապահովագրողները  $q_{\text{տ}}$ -ն հաշվարկում են հետևյալ բանաձևով՝

$$q_{\text{տ}} = (w_{\text{տ}} + w_{\text{տ}-1} + w_{\text{տ}-2}) / 3,$$

իսկ  $w_{\text{տ}}$ ,  $w_{\text{տ}-1}$  և  $w_{\text{տ}-2}$  որոշվում են հետևյալ կերպ՝

$$\omega_{տ} = Q_{տ} / \rho_{տ-1}, \quad \omega_{տ-1} = Q_{տ-1} / \rho_{տ-2}, \quad \omega_{տ-2} = Q_{տ-2} / \rho_{տ-3},$$

որտեղ՝

$\rho_{տ-3}$  - «տ-3» տարում ներկայացված պահանջների ծավալն է, որը հավասար է «տ-3» տարում վճարված ապահովագրական հատուցումների և դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉՊՊ-ի հանրագումարին:

$\rho_{տ-2}$  - «տ-2» տարում ներկայացված պահանջների ծավալն է, որը հավասար է «տ-2» տարում վճարված ապահովագրական հատուցումների և դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉՊՊ-ի հանրագումարին:

$\rho_{տ-1}$  - «տ-1» տարում ներկայացված պահանջների ծավալն է, որը հավասար է «տ-1» տարում վճարված ապահովագրական հատուցումների և դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉՊՊ-ի հանրագումարին:

$Q_{տ-2}$  - «տ-2» տարում ներկայացված այն պահանջների (վճարված ապահովագրական հատուցումների և դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉՊՊ-ի հանրագումար) ծավալն է, որոնք տեղի են ունեցել «տ-3» տարում

$Q_{տ-1}$  - «տ-1» տարում ներկայացված այն պահանջների (վճարված ապահովագրական հատուցումների և դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉՊՊ-ի հանրագումար) ծավալն է, որոնք տեղի են ունեցել «տ-2» տարում

$Q_{տ}$  - «տ» տարում ներկայացված այն պահանջների (վճարված ապահովագրական հատուցումների և դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉՊՊ-ի հանրագումար) ծավալն է, որոնք տեղի են ունեցել «տ-1» տարում

28. Մինչև երկու տարի գործունեություն ծավալած ապահովագրողի համար  $Q_{տ}=0.1$ :

29. Երկուսից մինչև երեք տարի գործունեություն ծավալած ապահովագրողը  $Q_{տ-ն}$  հաշվարկում է հետևյալ բանաձևով՝

$$Q_{տ} = (\omega_{տ} + \omega_{տ-1}) / 2:$$

30. Այն դեպքում, եթե հաշվարկված  $Q_{տ}$  գործակիցը փոքր է 0.1-ից, ապա հաշվարկներում օգտագործվում է  $Q_{տ}=0.1$  գործակիցը:

31. ՏՉՊՊ-ի չափն ապահովագրական պորտֆելի փոխանցման դեպքում հաշվարկելու համար պետք է  $Q_{տ-ն}$  բազմապատկել ( $\Sigma_{տ} + \Pi_{տ}$ ) հանրագումարին, որտեղ  $\Sigma_{տ-ն}$  հաշվետու տարում հունվարի 1-ից մինչև պորտֆելի փոխանցման օրը փաստացի կատարված հատուցումների ծավալը, ապահովագրական հատուցումների գծով կրեդիտորական պարտավորություններն ու կարգավորման ծախսերն են, իսկ  $\Pi_{տ-ն}$  հաշվարկման օրվա դրությամբ՝ ներկայացված, սակայն չվճարված պահանջների պահուստի (ՆՉՊՊ) չափն է:

32. Ապահովագրողի ընդհանուր ՏՉՊՊ-ի մեծությունը ապահովագրության առանձին դասերով հաշվարկված ՏՉՊՊ-ների հանրագումարն է:

### ԳԼՈՒԽ VIII. ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՅՈՒՍՏԻ (ՄՊ) ՀԱՇՎԱՐԿ

33. Ապահովագրողը կյանքի ապահովագրության յուրաքանչյուր պայմանագրի կուտակային մասի չափով պարտավոր է ձևավորել մաթեմատիկական պահուստ:

34. Մեկ պայմանագրի գծով ՄՊ-ի մեծությունը առնվազն պետք է հավասար լինի ապահովագրության պայմանագրի կուտակային մասի դիմաց փաստացի մուտք եղած ապահովագրավճարների չափին՝ հանած տվյալ ապահովագրության պայմանագրի գծով վճարված ապահովագրական հատուցումները և տվյալ ապահովագրին որպես փոխառություն տրված գումարները: Եթե կյանքի ապահովագրության որևէ պայմանագրի գծով ձևավորված պահուստի մեծությունը բացասական է, ապա հաշվետվություններում այն հավասարեցվում է զրոյի:

35. Մեկ պայմանագրի գծով ՄՊ-ի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$M_{ij} = (M_{i0ախ} + U_i - U_{R_i} - \Phi_i) + \sum_{j=1}^n (M_{i0ախ} + U_{ij} - U_{R_{ij}} - \Phi_{ij}) * t_{ij},$$

որտեղ՝

$M_{ij}$  -  $i$ -րդ ապահովագրության պայմանագրի գծով մաթեմատիկական պահուստի մեծությունն է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

$M_{i0ախ}$  -  $i$ -րդ ապահովագրության պայմանագրի գծով կյանքի ապահովագրության պահուստի մեծությունն է նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

*Ա<sub>i</sub> - հաշվետու ժամանակաշրջանում ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարների չափն է.*

*Ե<sub>ij</sub> - i-րդ ապահովագրության պայմանագրով նախատեսված ներդրումների հաշվետու ժամանակաշրջանի j-րդ օրվա եկամտաբերության գործակիցն է.*

*Ա<sub>7j</sub> - i-րդ ապահովագրության պայմանագրի գծով վճարված ապահովագրական հատուցումների մեծությունն է հաշվետու ժամանակաշրջանում.*

*Փ<sub>i</sub> - i-րդ ապահովագրության պայմանագրի կողմ հանդիսացող ապահովադրին տրամադրված փոխառությունների գծով ապահովագրողի պահանջների մեծության փոփոխությունն է՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում.*

*j - հաշվետու ժամանակաշրջանի օրն է.*

*n - հաշվետու ժամանակաշրջանի օրերի քանակն է.*

*Ա<sub>ij</sub> - i-րդ ապահովագրության պայմանագրի գծով հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանի j-րդ օրը ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարների գումարն է.*

*Ա<sub>7j</sub> - i-րդ ապահովագրության պայմանագրի գծով հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանի j-րդ օրը ապահովադրին վճարված ապահովագրական հատուցումների մեծությունն է.*

*Փ<sub>ij</sub> - i-րդ ապահովագրության պայմանագրի կողմ հանդիսացող ապահովադրին տրամադրված փոխառությունների գծով ապահովագրողի պահանջների մեծության փոփոխությունն է՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանի j-րդ օրը:*

36. ՄՊ-ի մեծությունը կարող է նվազեցվել օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն հուսալի համարվող վերաապահովագրողի մասնաբաժնի չափով:

#### **ՉԼՈՒԽ IX. ԲՈՆՈՒՍՆԵՐԻ ԵՎ ԶԵՂՉԵՐԻ ՊԱՅՈՒՍՏԻ (ԲԶՊ) ԶԱՇՎԱՐԿ**

37. ԲԶՊ-ն հաշվարկվում է բոլոր այն պայմանագրերի գծով, որոնք նախատեսում են պայմանագրում նշված պայմանների ի հայտ գալու դեպքում կատարել վճարումներ ապահովադրին ապահովագրողի շահույթից (բոնուս) և (կամ) ապահովագրավճարների մասնակի նվազեցում (զեղչ):

38. Բոնուսները և զեղչերը չեն ներառում ՄՊ-ում եկամտաբերության նորմայի հիման վրա հաշվարկված շահույթից կատարվող վճարումները:

39. ԲԶՊ-ն հաշվարկվում է յուրաքանչյուր պայմանագրի գծով առանձին: Ապահովագրողի ընդհանուր ԲԶՊ-ն առանձին պայմանագրերով ձևավորված ԲԶՊ-ների հանրագումարն է:

40. Մեկ պայմանագրի գծով ԲԶՊ-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԲԶՊ_i = \left( 1 - \frac{2O_i}{\eta O_i} \right) * \psi_i,$$

*որտեղ՝*

*ԲԶՊ<sub>i</sub> - մեկ պայմանագրի գծով ԲԶՊ-ի չափն է.*

*ՊO<sub>i</sub> - պայմանագրի գործողության ժամանակն է՝ օրերով.*

*2O<sub>i</sub> - պայմանագրի գործողության ավարտին մնացած ժամանակն է՝ օրերով.*

*ψ<sub>i</sub> - որպես բոնուս կամ զեղչ վճարման ենթակա գումարն է:*

#### **ՉԼՈՒԽ X. ԶԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄՆ ՊԱՅՈՒՍՏԻ (ԶՊ) ԶԱՇՎԱՐԿ**

41. ԶՊ-ը պետք է հաշվարկվի յուրաքանչյուր ապահովագրության յուրաքանչյուր դասի համար՝ առանձին: Ապահովագրողի ընդհանուր ԶՊ-ն ապահովագրության առանձին դասերի համար հաշվարկված ԶՊ-ների հանրագումարն է:

42. ԶՊ-ը ձևավորում են այն ապահովագրողները, որոնք տվյալ ապահովագրության դասի գծով գործունեություն են ծավալել առնվազն երեք տարի:

43. Ապահովագրողը ձևավորում է հավասարակշռման պահուստ, եթե առկա է հետևյալ պայմաններից առնվազն մեկը՝

42.1) վերլուծվող ժամանակահատվածում վնասաբերության ցուցանիշի միջինից ստանդարտ շեղումը 5% և ավելի է,

42.2) եթե վերլուծվող ժամանակահատվածում առկա է առնվազն մեկ տարի, որում փաստացի հատուցումները գերազանցել են տվյալ տարում վաստակած ապահովագրավճարների ծավալի 100% -ը:

43. Մինչև տասնհինգ տարի գործունեություն ծավալած ապահովագրողի համար վերլուծվող ժամանակահատված է համարվում նրա գործունեության ամբողջ ժամանակահատվածը, իսկ տասնհինգ և ավելի տարի գործունեություն ծավալած ապահովագրողի համար՝ նրա գործունեության վերջին տասնհինգ տարիները:

44. Տվյալ տարում վնասաբերության ցուցանիշն ապահովագրության տվյալ դասի գծով հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{տ} = (Z_{տ} - Z_{վտ}) / U_{վտ} ,$$

*որտեղ՝*

$V_{տ}$  - վնասաբերության ցուցանիշն է տվյալ տարում.

$Z_{տ}$  - տվյալ տարվա ընթացքում տվյալ ապահովագրության դասի գծով պահանջներն են (կատարված ապահովագրական հատուցումները, կրեդիտորական պատավորությունները և ՆՉՊՊ-ն).

$Z_{վտ}$  - տվյալ տարվա ընթացքում տվյալ ապահովագրության դասի գծով պահանջներում (կատարված ապահովագրական հատուցումները, կրեդիտորական պատավորությունները և ՆՉՊՊ-ն) օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն հուսալի համարվող վերաապահովագրողի կողմից կատարված ապահովագրական հատուցումներն են.

$U_{վտ}$  - տվյալ տարվա ընթացքում տվյալ ապահովագրության դասի գծով վաստակած ապահովագրավճարների ծավալն է՝ նվազեցրած օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն հուսալի համարվող վերաապահովագրողի մասնաբաժնի չափով:

45. Հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովագրողը համենատում է հաշվետու տարում վնասաբերության ցուցանիշը վերլուծվող ժամանակահատվածի վնասաբերության միջին տարեկան ցուցանիշի հետ: Եթե հաշվետու տարում վնասաբերության փաստացի ցուցանիշը փոքր է վերլուծվող ժամանակահատվածի միջին վնասաբերության ցուցանիշից, ապա այդ տարբերության չափով հատկացումներ են կատարվում ՀՊ-ին: Եթե հաշվետու տարում վնասաբերության ցուցանիշը մեծ է վերլուծվող ժամանակահատվածի միջինից, ապա ՀՊ-ից կարող են միջոցներ հատկացվել հաշվետու տարվա միջինից բարձր վնասը ծածկելու համար:

46. Հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՊ-ի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՀՊ = ՀՊ_{ց} + V_{տ} * (\overline{V_{տ}} - V_{տ\phi}) ,$$

*որտեղ՝*

$ՀՊ$  - հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՊ-ի մնացորդի չափն է տվյալ ապահովագրության դասի գծով.

$ՀՊ_{ց}$  - հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալ ապահովագրության դասի գծով ՀՊ-ի մնացորդն է.

$V_{տ}$  - հաշվետու տարվա ընթացքում վաստակած ապահովագրավճարների գումարն է՝ տվյալ ապահովագրության դասի պայմանագրերի գծով.

$\overline{V_{տ}}$  - հաշվետու տարվան նախորդող տարիների վնասաբերության ցուցանիշի միջին քվարանականն է.

$V_{տ\phi}$  - վնասաբերության փաստացի ցուցանիշն է հաշվետու տարում.

տ- հաշվետու տարին է:

47. Տվյալ ապահովագրության դասի գծով ձևավորված ՀՊ-ի մեծությունը չի կարող գերազանցել հաշվետու օրվա դրությամբ այդ ապահովագրության դասի գծով ընդհանուր ապահովագրական գումարի մեծությունը:

48. Եթե ՀՊ-ի հաշվարկային մեծությունը բացասական է, ապա հաշվետվություններում այն հավասարեցվում է զրոյի:

## ԳԼՈՒԽ XI. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

49. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում ապահովագրողը սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան հաստատում է ապահովագրական պահուստների ձևավորումը կանոնակարգող ներքին ակտ: